

ընկը անտառում անխտիր ջարդում է թէ հարիւրամեայ կաղ-
նինները, թէ 10 ամեայ մատաղ ծառը, և Դու այդ ամէնը տես-
նելով լուռ և անվրդով դիտում ես. իսկ մենք այդ գաղանացած
ամբոխի հաւատակիցներու, եղբայրներս, «Քրիստոս ի մէջ մեր
յայտնեցաւ» ենք երգում՝ աւելի հանգիստ, աւելի ուրախ, երբ
փողոցների, մայթերի յատակները ոպանդանոցի յատակներն են
յիշեցնում, երբ անպաշտպան մայրերի լացն ու աղաղակը, սպա-
նուող երեխաների աղէկտուր տնքոցները—Բեթղէհէմի կոտորածն
են յիշեցնում, երբ «կորչեն ջհուտները» աղաղակող մարդ—գաղան-
ները հաստ փայտերը, սառն զէնքերը ձեռքերին Բարդուղիմեան
գիշերն են յիշեցնում»։—Սրբազանը մարգարէութիւններից օրինակ-
ներ բերելով ցոյց է տալիս, որ հրէայ ժողովուրդը միշտ Աստու-
ծոյ ընտրեալ ժողովուրդն է եղել, միշտ վայելել է նորա բարեք-
ները, Հրէայ ժողովուրդը մի այնպիսի հաւատով է զիմել ամէն
անգամ և շարունակում է զիմել այսօր միակ Աստծուն, մի այն-
պիսի քնքշութեամբ է պահում հայրենի հաւատը, սովորութիւն-
ները, որով միայն կարող է օրինակ հանգիստնալ քրիստոնեայ
ազգաբնակութեան, մինչ սա «Սիրեցէք զԹշնամիս» խօսքերը եկե-
ղեցում լսելուց և «Քրիստոս յարեաւ» ասելուց յետոյ մի այնպիսի
կատաղութիւն ցոյց տուեց, որ ամօթի և նախատինքի կնիք է
գրօշմում քրիստոնեայ մարդոց ճակատին։

ԿԱԹՈՒՆԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Այն կռիւը, որ Ֆրանսիական կառավարութիւնը սկսել էր
կաթոլիկ միաբանութիւնների դէմ, յաջողութեամբ վերջանալու
վրայ է։ Կառավարութիւնը բոլոր միաբանութիւնները բաժանել
էր երեք կարգի՝ դպրոցական, քարոզչական, արգիւնաբերական
կամ վաճառականական։ Իւր բոլոր հաշիւներն առաջինների
հետ վերջացնելով, Կոմբի նախարարութիւնը այժմ ձեռք է
առել վերջին երեքոցը։ Այս կարգի այն բազմաթիւ խնդի-
րները, որով նա խնդրում էր իր իրաւական գոյութիւնը ճա-
նաչել, գատկից առաջ պալատի նիստերում, չնայելով կղե-
րականների բուռն բողոքներին, բացարձակապէս մերժուեցան։
Ֆրանսիական լրագրները լի են այնպիսի բազմակողմանի տե-
ղեկութիւններով, որոնց նայելով այդ կարգի սուրբ հարց

եկամտի արդիւնքը հասնում է առատութեական գումարներէ։ Այսպէս, Գոֆինէում Կարտէզեանները յայտնի «Դրան — Շարարեօգը» իւր հռչակաւոր «լիկեօր»ից տարին ուսանում էր զուտ արդիւնք 4¹/₂ միլիոն ֆրանկ, տարեկան արտահանելով 548,000 լիթր լիկեօր։ Նանսիի «Բարի Հովիւ» միաբանութիւնը իւր բազմաթիւ կալուածներից ստանալիս է եղել 15 միլիոն ֆրանկ մաքուր արդիւնք, և չնայած այդ միջոցին մաքուր արդիւնքը 15 միլիոն ֆրանկ էր։

— Ա. Գարբիէէեան կարգի վանահայրը իւր ստորադրութեաններին ուղարկել է մի հրահանգութիւն, որով պատուիրում է նրանց միայն բռնի ուժի առաջ խոնարհուել։ Իսկ ինչ վերաբերում է սոփորական կեանքի եղանակին, ստորագրեալները վրայ պարտաւորութիւն է դրուում ամէն բան շարունակել ըստ առաջնոյն, միեւնոյն պայմաններէ մէջ։

— Ֆրանսիական լրագրներից առնելով, «Եկեղ. Համբ.»-ը հետեւեալ մանրամասնութիւններն է հաղորդում Շարարեօգի վանքի փակման միջոցին առաջ եկած անկարգութեան մասին, որ կատարուել է ապրիլի 29 (ն. տ.)։ Դեռ նախքան թաց երեկոյեան վանքից դէպի շրջակայ բնակավայրերը տանող ճանապարհները կառավարութեան կարգադրութեամբ բոլորն էլ փակուել էին, ամբոխի առաջը կտրելու նպատակով։ Սակայն և այնպէս մօտ 1500 մարդ կարողացել էր գալ վանք, որոնք և որոշում են պաշտպանել վանքը կառավարութեան դէմ։ Ժամի 21¹/₂-ին դընդապետ Դոմիլիկ առաջնորդութեամբ հասնում է հետեւալի զօրքը և ոստիկանութիւնը, որ և անմիջապէս շրջապատում է վանքը։ Ամբոխը տեսնելով այդ, ցոյց է անում զօրքի դէմ ի պատիւ վանականների, և դնդապետի այն պահանջին, որ ցրուեն ամէնքը և ազատ թողնեն դէպի վանք տանող գլխաւոր ճանապարհը, բացառական պատասխան է տալիս։ Զօրքի և ամբոխի մէջ ընդհարումն է տեղի ունենում և այդ միջոցին շատերը վիրաւորուում են. ամբոխից շատերը կռուում են քարերով և փայտերով։ Կռիւք շարունակուում է մինչև ժամի 4-ը, երբ զօրքը, ճեղքելով ամբոխը, հասնում է վանքի գլխաւոր մուտքին։ Այստեղ կառավարութեան կողմից կարգուած դատախազն ու դատաւորը պահանջում են դուռը բանալ, որոնց բացասական պատասխան են տալիս ներսից և դիմադրում։ Գորանից յետոյ սկսում են վանքի զանգակները քաշել, որի վրայ ամբոխն աւելի ևս զրգուռում է և զայրոյթն աւելի ու աւելի մեծանում։ Վերջապէս ժամի 6-ին դատախազը հրամայում է կացիններով դուռը ջարդել և մտնել ներս։ Այդ միջոցին վանականները բոլորն էլ ծնկաչոք ազօթելիս են եղել և դատախազի,

որպէս օրէնքի ներկայացուցիչ հարցին, թէ անձնատուր էք լինում, նորա պատասխանում են, որ կամային անձնատուր չեն լինի, բայց կիսոնարհուեն բռնի ուժի առաջ: Ապա զինուորները հանում են նրանց վանքից դուրս և տանում: Ա. Լօրան, իսկ այնտեղից նրանք կուղարկուին Պիներօլ:

— Կարգերի փակման հետ միաժամանակ Կոմբ յանուն եպիսկոպոսներին հրաապրակել է մի շրջաբերական, որի մէջ յատկապէս շեշտուած է այն հանգամանքը, որ նոր օրէնքի հիման վրայ փակուած կարգերի անդամներն ամենեւին իրաւունք չպիտի համարեն իրենց մասնաւոր ազօթասներում քարոզելու և ժամապաշտութիւն կատարելու: Նախարարի տուած բացատրութեամբ այդ իրաւունքը բացառապէս պէտք է պատկանի ծխական եկեղեցիների քահանաներին, որոնք դաշնադրութեան համեմատ ազգային օրէնքի ներքոյ են: Այս շրջաբերականին Նանսիի եպիսկոպոսը ապրիլի 19-ին պատասխանեց իւր մի քարոզով, որի մէջ եպիսկոպոսը ամենակծու խօսքերով կշտամբել և դատապարտել է նախարարութեան վարմունքը և ընդհանրապէս Ֆրանսիական կառավարութիւնը: Կոմբ եպիսկոպոսին իւր յանդուգն վարմունքի պատճառով մի նամակ է ուղղել, որով սպառնացել է նախ կարճել նորա կառավարութիւնից ստացած թոշակը և ապա յանդիմանել նրան, որ նա համարձակուել է սահմանի վերայ գտնուած քաղաքի ընակչութեանը դրդուել կառավարութեան դէմ: Առ այս եպիսկոպոսն էլ իւր կողմից պատասխան է տուել „La Verité Française“ լրագրի մէջ, որով, ապացուցանելով նախարարութեան ապօրինի վարմունքը, արգարացնում է իրեն նրանով, որ ինքը միայն իւր եպիսկոպոսական պարտականութիւնն է կատարել: «Իմ քարոզն, ասում է եպիսկոպոսը, ո՛չ այլ ինչ էր, բայց եթէ ազատ երկրի ազատ քաղաքացու և կաթոլիկ եպիսկոպոսի գործողութիւն: Դուք ինձ հաղորդում էք, որ դուք կկարճէք իմ կառավարութիւնից ստացած թոշակը: Ես ո՛չ մի ժամանակ պատիւ և փող ձեռք բերելու ետեից չեմ ընկել: Դուք սպառնում էք, որ ուրիշ միջոցներ ձեռք կառնէք իմ վերաբերմամբ: Թո՛ղ այդպէս լինի. բայց ես ո՛չ մի ժամանակ ո՛չ ոքից երկիւղ չեմ կրել և ի հարկէ ձեր սպառնալիքներից էլ չեմ վախենում»:

— Վատիկանը, Ֆրանսիայի կողմից կրած իւր վշտերի փոխարէն, միեւնոյնում է իրեն այն համակրութիւններով, որ արտայայտուեցին նրան Պերմանիայի և Անգլիայի կողմից: Վատիկանը առանձնապէս ուրախ է և զոհ այն արքայական այցելութիւններով, որ արին պապին Էդուարդ VII թագաւորը և Վիլ-

հելմ II կայսրը: Առանձնապէս մեծ շքով ընդունեց Վատիկանը Վիլհելմ II-ին: Հռովմի հոգևորականութեան խօսքերին նայելով Վիլհելմ II այցելել է Վատիկանը ոչ իբրև բողոքական միապետ, այլ որպէս կաթոլիկ կայսր: Լրագրներին նայելով, պապը նրան ընդունելուց և մօտ 20 րոպէ առանձին իրար հետ խօսակցելուց յետոյ, ուղեկցել է կայսեր մինչև ընդունելութեան դահլիճի դուռը: Գերմանական կայսեր այցելութիւնը մեծ ուրախութիւն է պատճառել կաթոլիկ աշխարհին:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Գերմանիայում կրկին յուզուել և հետզհետէ աւելի լայն ծաւալ ստանալ է սկսում այն հարցը, թէ հարկաւոր է աստուածաբանական գիտութեամբ զբաղուող ուսուցչապետների առաջ որոշ պարտաւորութիւններ դնել և նրանց ազատութեան չափը որոշման ափսոսել: Ազատամիտ ուղղութեան ներկայացուցիչները, ուսուցչապետ Շմոլլէրի նախագահութեամբ մասնաւոր նիստ դումարելով, լճիւ կայացրին, որ գիտութիւնը կարող է ազատ ճանապարհով միայն անսայթաք առաջ գնալ: Խնդիրը, երկար ժամանակ յեղյեղուելուց յետոյ, դարձաւ պրոսական պալատի խորհրդածութեան առարկայ: Պալատը, քննելով խնդիրը բազմակողմանի կերպով, անհրաժեշտ համարեց գիտութեան ազատութիւնը, որ անխախտ պէտք է մնայ. իսկ ուսուցչապետների ուսումնականութիւնը կարող է ամենամեծ և վստահելի երաշխիքը լինել, որ նրանք զերծ կմնան զանազան երկուութիւններից և իրենց եղբակցութիւններով դայթակղութիւն չեն պատճառի:

— Հետսէնում ներկայումս ժողովրդի որոշ դասակարգի կողմից պահանջ է դրուել բոլորովին առանձնացնել, բաժանել ժողովրդական դպրոցները եկեղեցուց և պատուօրների մասնակցութիւնը միանգամայն ժխտել: Կառավարութիւնը սակայն այդ պահանջի դէմն առաւ, բացատրելով, որ սկզբնական կրթութեան ժամանակ անհրաժեշտ հարկաւոր է կրօնական դաստիարակութիւն և թէ պատուօրների մասնակցութիւնը ժողովրդական դպրոցների կառավարութեան մէջ անխուսափելի է նրանով, որ նրանք ամենակարեւոր անձնաւորութիւններն են այդ տեսակ դպրոցների գոյութեան և պահպանութեան համար:

